

ՏԱՍՆ ԵՒ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».  
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն շաբաթ:

Ցայտարարութիւնները համար վճարում են  
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

1891  
WIEN

## ԲՈՎԱՆԱԿԱՌԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Երևանում հիմնվելի գի-  
նգործական դպրոցի մասին. Նամակ վաղարշա-  
պատից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Պարսկաստան. Դատ փրանսիացի մի քանի եպիս-  
կոպոսների դէմ. Արտաքին լուրեր. —ՀՆՈՒԱԳԻՐ-  
ՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ  
Մատենագրութիւն:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻՍՏՈՒՆԻ ԳԻՆԵՐՈՐԾԱԿԱՆ ԴԵՊ-  
ՐՏԻ ՄԱՍԻՆ

Վաղուց է, որ Երևանեան նահանգի ազգաբնա-  
կութիւնը սկսել է լուրջ ուշադրութիւն դարձնել  
իր արդիւնաբերութեան զանազան ձևերի մշակ-  
ման ձևի և նրանց միջոցների մասին: Այդչա ար-  
արաւորեան դաշտում գիւղացու ձեռքին կը տես-  
նէր դարմանը ցորենից ջուղով մեքենայ: Երևան  
քաղաքում կը տեսնէր բոլորովին նոր ձևով գի-  
նեաներ—գորգաւորներ: Այդ մասնաւոր մարդկանց  
գործը, աչոյթ թէ անաշուղ, շատ էլ չէր կարող  
ազգէլ հասարակ—երկրագործ կամ գինեգործ դա-  
սի մշակման և կամ գինի պատրաստելու ձևի  
վրա, քանի որ նրանք իրանց գործը ժողովրդից  
ծածկում են: Ուրեմն անհրաժեշտ էր ընդհանուր  
հասարակութեանը պատկանող մի հիմնարկու-  
թիւն, որի կոչումը լինէր տարածել կատարելա-  
գործած մշակման ձևերը: Այդ հարցը գրաւել է  
Երևանեան նահանգի նախկին նահանգապետի ու-  
շադրութիւնը, որը ժողովել է տուել Երևանեան  
նահանգի այգիները և խաղողի արդիւնաբերու-  
թեան մասին ընդարձակ տեղեկութիւններ և այլ  
քանի հարցերով Թիֆլիսի կայսերական կոլլե-  
սեան Գիւղատնտեսական ընկերութեանը խնդրել  
է նախադիւ կազմել Երևան քաղաքում բացվելիք  
գինեգործական դպրոցի համար: Այն ալ գրու-  
թեան բառացի թարգմանութիւնը, որի ուսուցիչը  
գտնվում է «Труды Императорскаго кавказскаго  
общества Сельскаго хозяйства» ամսագրի 1890  
թ. № 10—11-ում:

Երևանեան նահանգի այն հարթավայրի, որը  
բնում է հինգ գաւառների մեծ մասը, այն է՝  
Երևանեան, Էջմիածնի, Սուրմալուի, Շարուր-  
Գարապետեան և Նախիջևանի, աչքի ընկ-  
նող գիւղատնտեսական արդիւնաբերութիւննե-  
րից մէկը կազմում է այգեգործութիւնը, որը  
այդուհի սկսվել է շատ հին ժամանակներից: Այդ  
տեղիւմ այգեգործութիւնը տարածված է թէ  
գիւղական և թէ քաղաքային հասարակութիւնների,

ինչպէս և թէ հայոց և թէ թուրքերի մէջ: 1888  
և 1889 թ. ժողոված տեղեկութիւններին նայելով,  
վերջինիս տեղի բնակիչների պարագմունքի զար-  
գացման աստիճանը կարելի է արտայայտել հե-  
տևեալ թուերով:

Երևանեան նահանգում այգեգործութեան կենսա-  
բուն կարելի է համարել Երևան քաղաքը, որտեղ  
գտնվում են 673 այգիներ 1,600 դեմետրին տա-  
րածութեամբ: Երևանեան գաւառում այգեգործու-  
թեամբ պարագմող գիւղերի թիւը հասնում է  
78-ի, որոնց մէջ հաշոււ են մտնում 7,443 տուն  
բնակիչ, որոնցից մեծ մասը հայեր են, իսկ փոքր  
մասը մահմետական թուրքեր:

Երևանեան գաւառում այգիների թիւը որոշված  
է մինչև 3,536, տարածութեամբ—1,988 դեմետ-  
րին: Այդ թիւից 3000 այգիներ պատկանում են  
քրիստոնեայ ազգաբնակչութեան (բացառապէս  
հայերին), իսկ մնացած այգիները կազմում են  
թուրք մահմետականների սեփականութիւն: Ու-  
րեմն ընդամենը Երևանեան գաւառում, քաղաքն  
էլ հետը հաշուած, կան 4,209 այգիներ 3,588  
դեմետրին տարածութեամբ:

Էջմիածնի գաւառում վաղի մշակութիւնը տա-  
րածված է 56 գիւղերում, որի 3/4 մասը 4,323  
տուն քրիստոնեայ բնակիչներով և 1/4 մասը  
1,000 տուն մահմետական բնակիչներով: Քրիս-  
տոնեայ ազգաբնակչութիւնը ունի 3,379 այգիներ  
1,708 դեմետրին տարածութեամբ, իսկ մահմե-  
տական ազգաբնակչութեան ձեռքում գտնվում է  
218 այգի միայն 112 դեմետրին տարածու-  
թեամբ:

Ուրեմն ամբողջ Էջմիածնի գաւառում կան  
3,597 այգիներ 1,820 դեմետրին տարածութեամբ:  
Սուրմալուի նահանգում խաղողի վաղի մշա-  
կութիւնը տարածված է 47 գիւղերում 5,348  
տուն բնակիչներով, որոնցից 2,634 քրիստոնեաներ  
են և 2,714 մահմետական: Ամբողջ գաւառում կան  
1,398 այգիներ 1,350 դեմետրին տարածութեամբ,  
որոնցից 1000 այգի, մօտ 1000 դեմետրին տա-  
րածութեամբ գտնվում են քրիստոնեաների ձեռ-  
քում, իսկ մնացած մասը գտնվում է մահմետա-  
կանների ձեռքում:

Շարուր-Գարապետեան գաւառում խաղողի  
վաղի մշակմամբ պարագմում են 64 գիւղեր, որ-  
տեղ հաշոււ են 2,136 տուն քրիստոնեայ և  
2,653 տուն մահմետական. քրիստոնեայ ազգա-  
բնակչութիւնը ունի 1,703 այգիներ 280 դեմետ-  
րին տարածութեամբ, իսկ մահմետական ազգա-  
բնակչութիւնը ունի 452 այգիներ 44 դեմետրին  
տարածութեամբ:

Ուրեմն ամբողջ գաւառում ընդամենը կան  
2,155 այգիներ 324 դեմետրին տարածութեամբ:  
Նախիջևանի գաւառում խաղողի վաղի մշա-

կութիւնով պարագմում են 48 գիւղեր, որտեղ  
հաշոււ են 3,665 տուն քրիստոնեայ և 2,922  
տուն մահմետական: Ամբողջ գաւառում կան  
1,445 այգիներ 615 դեմետրին տարածութեամբ,  
որոնցից կէսից աւելի քրիստոնեայ ազգաբնակչու-  
թեան ձեռքին է:

Երևանեան նահանգի 5 գաւառներում գտնված  
այգիների թիւը հասնում է 12,804-ի, որը բըռ-  
նում է 7,697 դեմետրին տեղ: Բերած թուերը  
ինքն ըստ ինքեան պարզ ցոյց են տալիս թէ որ-  
քան մեծ նշանակութիւն ունի այգեգործութիւնը  
Երևանեան նահանգի թէ գիւղական և թէ քաղա-  
քային հասարակութիւնների համար:

Երևանեան նահանգի ազգաբնակչութեան գիւ-  
ղատնտեսական արդիւնաբերութիւնների այս զը-  
խառն ձևի նշանակութիւնը պարզ և համոզե-  
ցուցիչ դարձնելու համար, անհրաժեշտ եմ համա-  
րում առաջ բերել վերջին 5 տարվան այգեկութի  
հետեւալ ստատիստիկական տեղեկութիւնները:  
Ամբողջ նահանգում 1885 թ. քաղված է 1,111,430  
պուղ խաղող, 1886 թ.ին 742,130 պուղ, 1887  
—1,833,550 պուղ, 1888 թ.—774,120 պուղ և  
1889 թ.—1,171,473 պուղ:

Ի նկատի ունենալով, որ Երևանեան նահանգում  
ստացված խաղողի քանակութիւնը միշտ 700,000  
պուղից աւելի է, ինչպէս 1885 և 1889 թ. և  
մասնաւոր 1889 թ. երբ ստացվեց մի միլիոն  
ու չորս հարիւր հազար պուղից աւելի, պէտք էր  
սպասել, որ ահագին քանակութեամբ գինի պիտի  
պատրաստվէր. այն ինչ նոյն 5 տարվայ ընթաց-  
քում անհամեմատ աւելի քիչ գինի է պատրաստ-  
վել քան թէ կարելի էր ստանալ: Այն է նոյն 3  
տարիներում ստացվել է.

|          |                    |
|----------|--------------------|
| 1885 թ.— | 281,160 վեզրօ գինի |
| 1886 թ.— | 276,200 » »        |
| 1887 թ.— | 291,235 » »        |
| 1888 թ.— | 109,837 » »        |
| 1889 թ.— | 168,144 » »        |

Այստեղից երևում է, որ Երևանեան նահան-  
գում ստացված խաղողի շատ աննշան մասն  
գործածվում գինի չիմելու համար, իսկ մեծ մասը  
գնում է տանու գործածութեան և օղի քաշելու  
համար:

Եթէ Երևանեան նահանգում անհամեմատ քիչ  
գինի է պատրաստվում նոյն տեղում արդիւնա-  
բերված խաղողից, դրա պատճառը պահանջի  
պակասութիւնն է, որին ապացոյց կարող են հա-  
մարվել գինիների տեղական ցածր գները:

Վերջինիս 5 տարիներում խաղողի գինը ե-  
ղել է պուղը 37 կ.—1 ռուբլի 20 կօպ. գինու  
վեզրօի արժեքն էլ 1 ռ. 50 կ. չէ բարձրացել և  
դեռ երբեմն էլ իջել է մինչև 70 կ. և միայն  
Շարուր-Գարապետեան գաւառում, որտեղ այ-

գեգործութիւնը զարգացման աւելի ստոր աստի-  
ճանի վրա է գտնվում քան Երևանեան և Էջմիած-  
նի գաւառում, գինու վեզրօի արժեքը լինում է  
2 ռուբլի և երբեմն էլ 2 ռ. 50 կ. (ինչպէս 1889  
թ.ին):

Գինու աղապիսի ցածր գների պատճառով ի  
հարկէ, այգեգործի համար ձեռնառու չէ գինի  
պատրաստել արտադնելու համար, այլ նա  
պատրաստում է միայն իր տնային գործածու-  
թեան համար: Հաղորդած ստատիստիկական տե-  
ղեկութիւններից երևում է, որ թէ գիւղական և  
թէ քաղաքի ազգաբնակչութեան գինեգործական  
արդիւնաբերութիւնը անբնական դուրեկան մէջ  
է: Քանի ստացած խաղողի մեծ մասը գործադրվի  
գինի պատրաստելու համար և քանի այդ գինին  
բարձր յատկութիւններ ունենայ, այնքան էլ նրա  
արժեքը կը բարձրանայ, որի պատճառով և լրա-  
պէս կարող են վարձատրվել այգեգործը և գինե-  
գործը: Բացի այդ, լաւ գինի ունեցած ժամանակ  
միշտ կարելի վտտահ լինել, որ անպատճառ կը  
ծախվի և կարող է արտահանվել իր արդիւնաբե-  
րութեան սահմաններից դուրս:

(Կը շարունակվի)

## ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

Հոկտեմբերի 5-ին

Ինչպէս անցեալ տարի, նոյնպէս և այս տարի,  
ես բաղդ ունեցայ գտնվել Էջմիածնի տօնին, ներ-  
կայ եղայ Գեորգեան 27-րդ տարեդարձի հան-  
դիսին: Այս տարի Էջմիածնում ուխտաւորների  
թիւը, համեմատելով անցեալ տարվայ հետ, շատ  
քիչ էր, բայց և այնպէս Ղազարապատ կոչված  
հիւրանոցի սենականները բոլորն էլ լի էին և հիւր-  
ընկալ վարդապետը չէր գիտէր ինչպէս վարվել  
սենական պահանջողների հետ: Էջմիածնում ես  
պատիւ ունեցայ տեսակցել տեղակալ սրբազանին,  
Ս. Պարգեանցին և Արիստակէս եպիսկոպոս Դաւ-  
թեանցին, վերջինս տպարանի տեսուչ է:

Այս տարի շատ շքեղ կերպով տօնվեց Գեոր-  
գեան ձեռնարանի 27-րդ տարեդարձը: 30-ին  
սեպտեմբերի, առաւօտեան ժամը 10-ին, ամբողջ  
հոգեւորական դասը, զգեստաւորված և շքապատ-  
ված խուռն բաղմոթեամբ, դիմեց դէպի Գեորգ  
Դ. կաթողիկոսի գերեզմանը և պատշաճաւոր հո-  
գեանդիստ կատարեց, այդ տեղից գնացին դէպի  
ձեռնարանը, ուր սրբազան տեսուչը կարգաց ձե-  
մարանի տարեկան աւար, որից յայտնվեց, որ  
անցեալ տարի ձեռնարանում ուսանում էին 126  
աշակերտներ, իսկ այս տարի 148 հոգի են. ու-  
սանողներէն 6-ը թոշակաւորներ են, իսկ մնա-  
ցածները ձրիավարած: ձեռնարանում դասախօսում  
են 9 ուսուցիչներ:

Դիւղ կարգով մինչև Արեւած, 11 նահապետ, ո-  
րոնց միջից երեկի է հանդիսանում հինգերորդ  
ծնունդը՝ Երեմ, ազգապետութիւն կազմելով,  
որի անունից ազգը կոչվում է Երեմյական: Այդ  
գծի երկրորդ մեծ հանգոյցը կազմում է 11-րդ  
նահապետը՝ Արեւած, որ դառնում է ազգերի  
հայր: Այդ 11 նահապետներն են՝ Սեմ, Արփա-  
սաթ, Կայան, Սաղայ, Երեմ, Ֆաղեկ, Ռազաւ,  
Սերուր, Նաբուր, Թարայ և Արեւած: Այս պատ-  
րաստ ծննդաբանութիւնն աչքի առաւ, այժմ խո-  
րենացին պիտի յերկրէ Քամային և Յաբեթա-  
յինն առանձինն առանձին: Այստեղ է խորենա-  
ցու ջանքն և անհաւաքների հնարաւոր դառնա-  
լը այդ ջանքի ուժով:

Եւսեբիոսի ազգաբանութեամբ Սեմային Արեւ-  
ածը, որ է հայր ազգերի, ժամանակակից է Քա-  
մային Նիւսոսին, որ շինում է Նիւոս քաղաքը և  
մի Նիւոսեանստան է հիմնում: Ազգաբանող խորե-  
նացին յիշեալ երկրում հանդէպ աւելցնում է  
մեր Արամին, որ երկիրներ է աշխարհակալում և  
երկրորդ անգամ անուանադիր լինում հայերին օ-  
տարների մօտ, որոնք սկսում են մեղ Արմին կամ

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

MOISE de KHOREN et les Généalogies patriar-  
cales. par A. Carrière.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ և նահապետական ազգաբա-  
նութիւնը:

(Տես «Մշակ» № 108)

Բարձրացնելու համար իր ժամանակակից հայի  
սիրտը, որ պատրաստվում էր առաջիկայ մեծ  
կռիւն, ուր քաջ նախարարութեան նահապետը  
Վահան Մամիկոնեան նորից պարզելու էր կար-  
միր վարդապետի դրօշը, մտաւոր և կրօնական  
անկախութեան համար, Սասանեան բռնապետու-  
թեան դէմ, խորենացին ձեռք է դարձրում հաւա-  
տացին իր այդ հային, թէ նա ևս աղին ծագու-  
մից է. աւելի ևս, թէ նա կարված է այն ժայ-

ռերից, որ ս. Գրքի լեզուով կոչվում են «սկայք ի  
վերայ երկրի», կամ «նոթա էին սկայքն որ յաւի-  
տենից այք անուանիք», և կամ, ինչպէս խորենա-  
ցին ինքն իր ուժգին բացատրութեամբ արտա-  
յայտում է՝ «սկայք անհեղեղ, յաղթանալով  
մարմնով և վիթխարիք»: Սրանցից էր յապետու-  
թեան Հայկը, հայերի անուանադիրը:

Յաղթանակից ահեղ և երեկելի զիջադառնների  
կամ անուանի մարդիկները ծանօթութիւնը ս.  
Գրքից է, որ և կարգում է նրանց ծննդաբանու-  
թիւնը սկզբից մինչև մեծ Նաաշէնը, որ իր հըս-  
կայական տապանով պիտի լրջայ աշխարհաւոր  
ջրերի երեսին, և ապա սրանից ծննդաբանելով  
նա հասնում է մինչև այն հսկաները, որ երկրի  
վրա կոչվում են «որսորդ առաջի տեսուն Աս-  
տուծոյ»: և ձեռնարկում են շինել այն ահագին  
քաղաք-աշտարակը, որով երկրի Տիտանները ձեռն-  
մուխ են լինում շահատակել երկրի զորութիւն-  
ների դէմ, և ծագումն են տալիս մեծ խառնա-  
կութեանը և ազգերի Բաթանյանը: Այս տեղից  
ս. Գրքը թողնում է միաներին և ընդունելով  
Երեմյական ազգը կարգում է միայն սրա ծննդա-



Տեղակալ սրբազանը, իր ազդու աստիճանաբարձրումը, բացառաբար ճանաչողական և օրհանգիստային և ուսուցանողական, յոյս յայտնելով, որ ճանաչողը կը տայ իր հիմնադրի յուսացած պտուղները, տալով ազգին առաքելի և հասկացող զաւակներ:

Սրբազանի քարոզից յետոյ երգեցին ազգային երգեր: Աշակերտները քաղցրահունչ երգերը շատ բարեբար ազդեցութիւն էին թողնում հանդիսականներին վրա:

Այդ օրը երեկոյան շատ չքեղ կերպով լուսաւորված էին ճեմարանի թէ սենեակները և թէ դուրսը: Հազարաւոր դրօշակներ, վիշդիկներ, ծաղիկայ կամարներ, գոյնզգոյն լապտերներ փայլում էին հրախաղճեան մէջ: Մօսկվաքանակ ժամաւարեան եղբայրների նուիրած արհեստական արեւը, մողական լապտերները, դրանց վրա աւելաւոր է անմարան սաների քաղցրահունչ երգերը և երաժշտութիւնը:—այդ բոլորը այցելուի վրա թողնում էր շատ անուշ ազդեցութիւն: Հանդիսին ներկայ էին երանի և վաղարշապատի ինտելիգենտ դասը, նաև պաշտօնական բարձրաստիճան անձինք: Հանդիսի վերջում ցայց տուեցին մողական պատկերներ Թիւրքի կեանքից, որոնց վերջը խորհեան Հայրիկի պատկերը ընդունվեց զեմք ծափահարութիւններով:

Հաւանաբար աղբիւրներից լսեցի, որ ճեմարանի վարժիկներ, ի նկատի ունենալով, որ ճեմարանի մտնել ցանկացող ուսանողներին թիւը շատ շատ է և որոնց հազիւ կէս մասն է ընդունվում տեղ չը լինելու պատճառով, վճռել է եկող տարուց բանալ նաև երթևեկների բաժին, այնպէս որ ուսանողներին թիւը հասնի մինչև 400—500-ի: Այդ միտքը շատ գովելի է, և փափագելի է նրա իրագործվելը: Արդէն վեհափառ հիմնադրի օրով ճեմարանը այդպէս էր կառավարվում. կային բազմաթիւ երթևեկներ, այնպէս որ ամեն ինդրամասայց կարող էր տեղ գտնել ճեմարանում, մինչդեռ հիմա քսանից մէկին է աչոյցվում մտնել Գէորգեան ճեմարանը:

Այցելեցի նաև մատենադարանը և վեհափառ, որ պահվում է շատ մաքուր և պատշաճաբար: Ելմիսածնի տպարանը նոյնպէս լաւ վիճակի մէջ է, միայն փափագելի է, որ մայր թնոռի մամուլի տակից դուրս գային ժողովրդին պիտանի գրքեր և ոչ թէ միայն չոր ու ցամաք «Արարատը», որի աստացողները համարեա չեն էլ կարողում: Միթէ չէ կարելի ժողովրդական բարոյական փոքրիկ բրօշուրներ տպել և տարածել ժողովրդի մէջ: Արդէն Ս. Պետերբուրգի ուղղափառ պիտոյն ունի հազարաւոր հրատարակութիւններ ժողովրդի համար, որոնք մեծ քանակութեամբ տարածվում են ժողովրդի ամեն խաւերի մէջ, և որոնց նիւթը վերցրած է ս. գրքից, ազգային պատմութիւնից և այլ շատ բարոյական խրատական կեանքներից: Միթէ Ելմիսածնի տպարանը չէ իր որոշ քարոզական ուսում տալ և ընթերցանութիւն տարածել:

Այս տարվայ ուխտին Ելմիսածնում գողացան 8 եղ. փաթեթներ 4 աղջիկ և սպանվեց մի աղքատագրապօղի պատական երիտասարդ, 21 տարեկան: Սպանութիւնը անգղուշութիւնից էր:

Շիրակեցի

Արմէնի կոչել: Նոյն երեք որդիներին ահաւասիկ ուրեմն երեք ներկայացուցչներ:

Աբրահամ Նինոս Արամ

Ս. գիրքը շարունակելով Սեմական գիծը մինչև Աբրահամ, Գամային և Յաբեթական գծերը թողել էր կէս ճանապարհին՝ երրորդ աստիճանի վրա, այսպէս՝

Քամ Յաբեթ  
Քուշ Գամբ  
Ներքով թորգոմ:

Եւսեբիոս իր կողմից երկրորդ գծի վրա նշանակում է Նինոսի անունը, որին և համարում է Բէլի որդի. իսկ թորենացին ծննդաբանողների թողած դատարկը լցնելու համար՝ ձեռք է զարկում վերջին երկու գծերի թերին լրացնելու զփութարին գործին: Սեմականին հաւասար գալու համար՝ Քամի գաւազանի վրա պակասում է եօթն անուն, իսկ Յաբեթի գաւազանի վրա ութ անուն: Այժմ թորենացին պիտի գտնի կամ հնարէ այդ անունները: Ասեմը այստեղ, որ նա սիրում է նախ նշանաւոր և նշանակութեամբ իրար հաւասար կէտեր դնել և ապա կէտերի միջոցները լցնել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Այսօր, հինգշաբթի օր, հոկտեմբերի 24-ին, թիֆլիսի արքունական թատրոնում հայ դերասանական խումբը կը ներկայացնէ Շէկսպիրի «Մի կնոջ սանձահարում» կոմիդիա 5 արարածով և 7 պատկերներով, թարգմանութիւն Ա. Մանդի-նեանի: Կը մասնակցեն խմբի ամենալաւ ոյժերը: Սկիզբը 7 1/2 ժամին երեկոյեան:

«Тифл. Театръ» լրագրի մէջ կարդում ենք. «Մեր ընթերցողներին յայտնի է, որ կառավարչական հիմնարկութիւններում հայ-լուսաւորչականների երդում տալու հարցի առիթով տարաձայնութիւն սկսվեց դատաւարական վարչութեան և հայ հոգեւորականութեան մէջ, որը հանդուցեալ Մակար կաթողիկոսի կարգադրութեան համաձայն, հրաժարվում էր երդվեցնել հայերին ուսուցելու լեզուով: Այդ հարցը Ելմիսածնի ակնոցը բարձր էլեւանութիւնների հայեցողութեան առաջարկեց: Այժմ ներքին գործերի պ. մինիստրը զիտուրական միջնորդի հետ համաձայնութիւն կայացնելով, հետեւեալ կարգադրութիւն եղաւ. հայերը պէտք է աւագանի ուսուց լեզուով երգվեն, իսկ եթէ երգվողները ուսուցելու լեզուն չը գիտեն, պէտք է թարգմաններ ինքնուր կերպով: Պէտք է երգվեցնեն՝ զիտուրական ծառայութիւնը մտնող նորակույ հայերին:—նրանց զինուորական իշխանութիւնները, իսկ հայ վկայներին, թէ քաղաքացիական և թէ զինուորական դատարաններում—դատարաններին նախագահները»:

Պարսկաստանից եկած լուրերը հաղորդում են, որ Արաքստանի ընդհանուր նահանգապետ Էմիր-Նիզամը, ծխախոտի բէժի օրէնքի Պարսկաստանի մէջ մտցնելուն հակառակ լինելով, այս օրերս պաշտօնական է եղել Դաշի հրամանով և կանչվել է թէհրան: Սակայն առհասարակ Էմիր-Նիզամը շատ սիրով էր Դաշից՝ որպէս բուն եւրոպական կրթութիւն ստացած մարդ և որպէս ներդաշնակ ու համբերող ուղղութիւն ունեցող կառավարչական անձնաւորութիւն:

«Нов. Обозр. լրագրի» ուրախ է շատ, կարծեւ լով որ բռնել է մեր սխալը: Լրագիրն ասում է, որ մենք արտասպանեցինք Հայոց Բաբեղործական ընկերութեան խորհրդի վեճի մասին լուրը, առանց լինելու տղերքը: Կարծում ենք որ մեծ զանազանութիւն է իրան վերաբերել մի լուր, կամ անտեղի կերպով ուրիշին վերաբերել մի լուր, կամ այնպիսի լուր արտասպան, առանց լրագրի աւանդ տալու, որն արդէն ամենքը կարդացած են մի ալ լրագրում: Մենք հաւատացած էինք, որ «Нов. Обозр.» լրագիրը, ինչպէս բոլոր ընթերցողները, մեղանից առաջ կարեացած կը լինէր նոյն լուրը «Тифл. Театръ» լրագրում, ուրեմն ինչպէս կարող է լրագիրը մեզ վերաբերել նոյն լուրը: Մենք հօ չենք ասել «մեզ հաղորդում են», կամ «մենք լսում ենք» և այլն, այլ ուղղակի արտասպանեցինք լուրը:

Մեզ հաղորդում են ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՆԱՆԻՑ հետեւեալը. «Նա երկու շաբաթ է, որ օրերով Մ. Գեւորեան երգչուհին Նոր-Նախիջևանում է: Այս»

Ս. գիրքը թորենացուն տալիս է Սեմ, Քամ, Յաբեթ—առաջին նահապետները. իսկ Ս. Գիրքն և Եւսեբիոս նրան տալիս են Աբրահամ, Նինոս, պակասում է մի անուն. թորենացուն զփութար չէ այստեղ նրանց հաւասարադրող գտնել. չէ որ օտարները մեզ Երմին և կոչում, ուրեմն մեր անունաւորները եղած կը լինի Արամ. ուստի թորենացին լրացնում է այսպէս՝ Աբրահամ—Նինոս—Արամ: Այժմ երկու ծայրերը կան, պէտք է զբաղեն միջին յենակետերը: Այստեղ Ս. Գիրքը տալիս է առաջին գաւազանի վրա երեք՝ Երբայա-կան ազգի հայրը և հիմնադրը, լուր է մնում միւս գաւազանների նկատմամբ. լուր են ժամանակագրողներն էլ: թորենացին, զէմ չէ առնում, նա ասում է Բէլ, Հայկ. առաջինը Բաբելոնի հիմնադրը, երկրորդը՝ առաջինը հայը և հայերի ազգապետը: Համապատասխան ազգերի աւանդութեան մէջ երկուսի անունն էլ կայ. Հայկի անունը մինչև անգամ երկնքում մի համաստեղութեան վրա էլ էր գրված:

Թորենացու զլիւսւոր կէտերը արդէն պատահաւ են:

Սեմ Քամ Յաբեթ

տեղից նա մտադիր էր թիֆլիս ուղևորվել: Սակայն, ինչպէս երևում է, նա այդ սեղծումը կը մնայ Բօստով քաղաքում, որտեղ հրաւիրվել է մասնակցել օպերային: Նա արդէն առաջին անգամ երգել է այդ քաղաքի օպերայում, բնի դուրս գալով «Ֆաուստ» օպերայի Մարգարիտայի դերում: Օրերով մեծ աչոյցութեամբ կատարեց այդ դերը. թէ իր ներդաշնակ ու մշակված ձայնը և թէ իր միմիկան շատ աչոյ տպաւորութիւն գործեցին հասարակութեան վրա:

Յանկարծակի մասվան դէպքերը թիֆլիսում շատացել են. շաբաթ չէ անցնում, որ յանկարծակի մահ չը պատահի. երբեմն մի օրվայ մէջ մի քանի յանկարծակի մահեր են լինում. օրինակ, ամսիս 17-ին թիֆլիսի Մէլգանում յանկարծակի վախճանվեց մի ոմն Գրիգոր Վաղարշանց, և նոյն օրը յանկարծակի վախճանվեց մի նորդիւնեան դորա-բաժնի նաւագաւթի վաճառարէլ պ. Վրդէ:

Չը նայելով որ մեր երկրում այս տարի կենսական միջոցների մեծ աւատութիւն է, բայց շահախնդիր մարդկանց պատճառով մենք ստիպված ենք միշտ ամեն բան կրակի գնով առնել: Օրինակ, միջոցառ թիֆլիսի Մէլգանը լցված է հացով և ալիւրի դրնը հեռուցնում ընկնում է, այնպէս որ լաւ ալիւրը ծախվում է ուղղը 80 կօպէկով, բայց ամենաստոր ալիւրից թլած խրմոր հացը ծախվում են ֆունտը 3 1/2 կօպէկով: Անաղին քանակութիւն խաղող է բերվում քաղաքը և բախկաններ վրա ծախվում չնչին գնով, բայց վերջինները ծախվում են ֆունտը 5—6—7—8 կօպէկով: Գիւղերից և գաւառներից գրում են, որ գիւղերում գինու ծովեր են կազմվել, այնքան առուտ է խաղողը և բարձր տեսակի գինի ծախվում է ամենաչին գնով, բայց թիֆլիսի հաստալիւր և կարմիրեւ չիլաջները թիֆլիսի գինին մեզ վրա ծախվում են թունդին մի բլուրով և էլ աւելի գնով: Չը նայելով որ միւր լժան է, ֆունտը 6—7 կօպէկով է ծախվում, բայց մնացու անասունների խիստ էժանութեան պատճառով աւելի է լժան պէտք է լինի միւր, սակայն մեր մասվածները և հացավաճառները այնքան խորամանկ են, որ երբեմն-երբեմն խնդրեց են ներկայացնելու քաղաքային վարչութեան՝ թախանձելով, որ հացի և միսի որոշված տակաւն բարձրացվի և այդ նրանք անում են այն նպատակով, որ եթէ քաղաքային վարչութիւնը այդ երկու կենսական միջոցների տակաւն չը բարձրացնէ, աչքի առաջ ունենալով իրանց բողբոջները, չէ ջանքացնել: Եւ այդ աչքալապտիկները նրանց աչոյցում է: Այդ կարելի է եղականցնել նրանից, որ մեր մասվածները, չը նայելով որ քաղաքային վարչութիւնից մերմասն են տեսնում միս տակաւն բարձրացնելու, այնու ամենայնիւ, շահութեամբ են անարտուժ և ամենայն ուրախութեամբ տակաւն համեմատ ծախել միւր...

Այս օրերս թիֆլիսի վէրա կոչված արուարձանում, մի ձորի մէջ գտան մի ուսումնական կին: Բանից յայտնվեց, որ այդ կինը նախորդ գիւղերը կրթագրութեամբ է եղել և գիւղերից ուղ ծաւալն հարբած տուն վերադառնալիս, ընկել է ձորի մէջ և մեռել:

Այս օրերս թիֆլիսի վէրա կոչված արուարձանում, մի ձորի մէջ գտան մի ուսումնական կին: Բանից յայտնվեց, որ այդ կինը նախորդ գիւղերը կրթագրութեամբ է եղել և գիւղերից ուղ ծաւալն հարբած տուն վերադառնալիս, ընկել է ձորի մէջ և մեռել:

Երեւ Քէլ Հայկ  
Աբրահամ Նինոս Արամ:  
Այժմ պէտք է լցնել միջոցները: Աբրահամից առաջ դէպի վեր գնալով երեքին հանելու համար՝ միջոց տեղում կայ հինգ անուն. ուրեմն հնդկական անուն պէտք է՝ Նինոսից քէլ և Արամից Հայկ անցնելու համար: Ս. Գիրքը արհամարհանքով լուր է. թորենացին ուրիշ տեղից է օգնութիւն որոնում, և գտնում է նա մի Աբել-դենոս ժամանակագիր, որ շատ բաներ է պատմում և ասում է այսպէս. Նինոս Աբելայի, Քալադայի, Աբելայի, Անիկայի, Բաբեայի, Բէլայի, իսկ Արամ՝ Հարմայի, Գեղամայի, Մամանայի, Արամայի սեայ, Արամանայի, չոր եղև հակառակ Բէլայի միանգամայն և կենսախոգ: Գիտելու է որ Աբել-դենոսի ազգագրութեան մէջ այստեղ՝ Հայկի անունը չը կայ և Արամանային է ասվում հակառակ Բէլայի և կենսախոգ: Թորենացին այդ դատարկը լցնում է իրենց՝ որպէս ասվեցաւ վերևում, և մենք ունենք Հայկ—մեծ և պաշտված ու պաշտելի անունը կամ, որպէս աւելի սերելի է ասել, զաղափարը: Եւ սա է աստուածացեալ բնաւորի—Բէլի կենսախոգը:

Այժմ թիֆլիսում է գտնվում պօստ-հեռագրական գլխավոր վարչութեան վերատեսուչ պ. Լէֆ-նէր, որը ամսիս 18-ին թիֆլիսի պօստ-հեռագրական գրասենեակում վերաբնութիւն արեց:

Ժանդարմական կօրպուսի գլխավոր գեներալ-լէյտենանտ Պէտրով ամսիս 20-ին թիֆլիս ժամանեց, տեղիս Ժանդարմական վարչութիւնը ընկելու նպատակով:

ԳԻՐԲԵՆՏԻՑ հեռագրում են տեղական լրագիրներին որ ամսիս 19-ին, գիւղերը, այնտեղ զգույն եղաւ սաստիկ երկրաշարժ:

Մինչև այժմ, թիֆլիսի վաճառ մայր եկեղեցւոյ պատարագի ժամանակ, կիրակի օրերը, երգում էր եղնիկ քահանայ երգչկանցի. երգեցիկ խումբը, որի պատճառով եկեղեցւում խմբվում էր հազին բազմութիւն, իսկ վերջերս այդ խումբը աւելի երգում և պատարագը կատարվում է մի երկու տիրացուների մասնակցութեամբ: Կանոնադրեցողութիւն չը լինելու պատճառով, եկեղեցին թափուր է լինում ժողովրդից:

Տեղական լրագիրները հաղորդում են, որ Ա. Գրիգորեան երկաթուղու «Փոյլ» կայարան մօտ երկու օտարազգիներ գտնել են նաւթի հանքեր և արդէն խնդրեց են ներկայացրել կառավարութեան ուստիսպատակութիւն ընդունելու համար: որպէս զի իրաւունք ունենան այդ հանքերը մշակելու: Բացի դրանից այդ մի և՛ նոյն տեղը վերջերս գտնվել է և ոսկու հանք:

Գանձակից եկողները պատմում են, որ այս տարի Գանձակում գինու բերքը այնքան առուտ է, որ գինին տեղաւորելու համար ներդրվում են կրում: Տակաւագործները այդ նա պիտանի տախտակներ չունեն, որ տակաւներ չլինեն:

Հաստատ աղբիւրից տեղեկանում ենք, որ «Արբիւր» և «Տարազի» խմբագիր-հրատարակիչ պ. Տ. Նաղարեան արդէն խնդրեց են ներկայացրել Պետերբուրգի տպագրական գլխավոր վարչութեան՝ մի ուսումնական ամենօրեայ լրագիր հրատարակելու իրաւունքը ձեռք բերելու:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Թիֆլիսի Հայոցեանց բարեգործական ընկերութեան վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը նորին գերազանցութեան, Ստեփան Պողոսեան Ղամբարեանին, այն 200 բուրլու համար, որ նա բարեհաճել է նուիրել ի միշտակ իր անունին՝ հանգուցեալ Նունէ Ղամբարեանին, յօգուտ մեր օրը և աղքատիկ սանիկներին ուսման, փոխանակ հողու հաց (քելիս) կօչված ճաշը տալու»:

ԲԱԳՈՒՅԻ մեզ գումար են. «Զովորա գիւղի քահանայի վախճանվելու պատճառով այժմ այդ գիւղի հայ ժողովուրդը, ինչպէս լսում ենք, հովանք է մօտակայ գիւղի քահանայ: Բայց որովհետև վաղ թէ ուշ մի օր և է անձնաւորութիւն ձեռնադրվելու է յիշեալ գիւղի համար, ուստի շատ ցած կայի է, որ այդ անձնաւորութիւնը լինի հաս

Այժմ հինգերորդ նահապետից սկսած աղբիւրական երեք գաւազանների բոլոր նահապետներն ունենք մինչև Աբրահամ—Նինոս—Արամ, այսպէս՝

- 5) Երեւ Քէլ Հայկ
- 6) Փաղէկ Բաբ Արաման
- 7) Ռազա Անիկա Արաման
- 8) Սերոբ Աբել Արաման
- 9) Նաբովր Քալադ Գեղամ
- 10) Թարայ Աբել Բ. Հարմա
- 11) Աբրահամ Նինոս Արամ

Մնում է զլիւն այս ցուցակը վերելից բւելացնելով չորսական անուն: Առաջին գաւազանի համար անունները պատրաստ են. Սեմ, Աբիլ-բաթ, Կալան, Սաղա: իսկ միւս երկուսը, ինչպէս վերևում տեսնեք, երեք երեք անուն մի մի ունին պատրաստ: Թորենացին պիտի գտնի մի մի անուն էլ:

Ա. Մ. Երեկեան  
—ասաւ նախորդ չ գտնեց իմ ցուցակից մեծ անուն  
—դրան միջոց ուն ամ 111 անուն բոլ զի յոժատ  
—դեռ մեռ չ ծախվաւ ամ 111 ամ զյան չ թի



պատասխան իր կողման և նրա մտաւոր ու բարոյական դարգացման մակերեսով բարձր լինի փողովդի դարգացումը:

Երեւելիք մեզ գրում են. «Լսում ենք որ էջ-թածնի ուսումնական փողովը գիտաւորութիւն չի եկող տարւանից երգեցողութեան դասը 20 րոպէի դարձնել և առհասարակ կուպարների մէջ փնտրել փոփոխութիւն մտցնել»:

Մեզ գրում են Երեւելիք հետեւալը. «Տեղիս գայեանեան օրիորդաց դպրոցում վերջին երեք տարւոյ ընթացքում ահա երրորդ անգամն է որ աշակերտութիւններից պահանջվում է իրանց նախկին համազգեստը նոր ձևի և գոյնի փոխել: Արդե՞ք մտա-ծում են որ այդ անընդհատ փոփոխութիւնները շատ ծանր են աշակերտութիւնների ծնողների գրպա-նի համար»:

Երեւելիք թի, հոկտեմբերի 22-ին, ուսուց դրա-մատական խումբը Թիֆլիսի քաղաքային թատ-րոնում ներկայացրեց Սարգիսի «Բաժանված կին» դրաման, 4 դործողութեամբ, և Ֆեոդորովի «Мод-ный лакей» 4 փոխգրք—հանաքը 1 դործողու-թեամբ: Դրամայի կարճ բովանդակութիւնը սա է: Կոմս Կլէրմոն-դէ-Լատուր, որը մի երեք տարե-կան աղջկ ունի, մի օր տուն վերադառ-նալով իր կառաւորից իր եղբոր հետ, տեսնում է որ իր գեղեցիկ կինը գիշերով ծածուկ սիրելեան է ընդունում իր մօտ: Կոմսը ինկոյն և եթ հրամա-յում է դայակին իր երեքամեայ աղջկան վերցնել և տանել գիւղը, և այդ կարգադրութիւնն անե-լուց յետոյ կոմսուհուն դուրս է անում իր տնից: Ձր նայելով կոմսուհուն բողբոջի, որ ասում է իր մարդուն, թէ այդպիսի յանցանք դուք համարեա-լով որ էք կատարում, ես ես կատարեցի, ուրեմն մեք կ'վիտ ենք, կոմսը ուղիւ ուղարկութիւն չէ դարձնում, և անդիմա՞նչ մնում իր վճռի մէջ: Կոմսուհին երկար թափառելուց յետոյ և զանա-գանց կատարելի անձանց չըջանում իր օրերը անցկացնելուց յետոյ, գնում է Նիցցա այն ժամա-նակ, երբ կոմս գե-լատուր իր արդէն նշանվե-լու աղջկայ հետ նոյնպէս դառնում է այնտեղ: Կոմսի աղջկից սիրահարված է մի երիտասար-դի վրա, որը փոխադարձապէս սիրում է նրան և կամենում է պսակվել նրա հետ, բայց աղջ-կայ մօր անցեալը արգելք է լինում դրան: Ջա-հիլ աղջկից, որը երբեք չէ տեսել իր մօրը և հաւատարմաց է թէ իր մայրը մեռած է, չէ հա-կանում իր սիրած մարդու անվճարականութեան և իր հարսանիքի յետաճգութեան պատճառը: Կոմսուհին իմանալով իր աղջկայ Նիցցայում զբոս-նելու անպատճառ կամենում է տեսնել նրա հետ, ինչ պայմանով էլ լինի: Կոմսը առաջար-կում է նրան՝ այլ ևս իր աղգանունը չը կրել: Ֆե-րանսիայում չապրել և աղջկայ հետ տեսնելու ժամանակ չը յայտնել թէ ինքն նրա մայրն է: Կոմսուհին համաձայնվում է, որովհետեւ իր աղջկայ երջանկութիւնը կախված է դրանից: Եւ ահա այդ վերջին սրտաշարժ տեսակցութիւնից յետոյ, կոմսուհին գնում է և ընկնում ծովը ու խնդ-րում: Կոմսուհու դերը, որ կատարում էր տ. Մայրոփա, իր սրտաշարժ խաղով, մանաւանդ չորրորդ դործողութեան մէջ մեծ տպաւորութիւն գործեց հասարակութեան վրա: Միայն Թիֆլիսի խաղին մի փոքր փնտրում է նրա մի զուտ լաց-կան ձայնով խօսելը: Մնացած դերակատարներն ևս վատ չէին իրանց դերերում և չէին փայցնում անասմբը: Թատրոնը կատարելապէս դատարկ էր:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԿԱՍՏԱՆ

Կ. Պոլսում Փրանս-անգլիական մի ընկերու-թիւն կայ, որը ծխախոտի ընդարձակ առետուր է վարում: Նորերս այդ ընկերութիւնը համաձայ-նութիւն կայացրեց անգլիական այն յանձնաժո-ղովի հետ, որը պարսից կառավարութիւնից ծխա-խոտի մենապատկանութեան իրաւունք էր ստացել: Այդ համաձայնութեան հիման վրա վերոյիշեալ Փրանս-անգլիական ընկերութիւնը բացառական իրաւունք ստացաւ պարսիական ծխախոտի ա-ռետուր վարել: Սակայն, ինչ որ ընկերութիւնը այդ իրան համար շահաւէտ համաձայնութիւնը կապարդ, Պարսկաստանից վերին աստիճանի անասմբը տեղեկութիւններ ստացվեցան: Միա-խոտի մենապատկանութեան իրաւունքը եւրոպացի-

ների ձեռքն անցնելու լուրը կատարեցրեց պար-սիկներին, և դրանք քիչ էր մնում քրիստոնեանե-րի կոտորած սկսեցին:

Անգլիացիները, որոնք վաղուց արդէն աշխա-տում են խաղաղ միջոցներով Պարսկաստանն ի-րանց ձեռքը գցել, բանկերը և երկաթուղիները ձեռք բերելու փորձերից յետոյ, ուղեցան տեղա-կան հարստութիւններից մինն եւ, այն է ծխա-խոտի մենապատկանութեան իրաւունքն ստանալ: Օգուտ քաղելով պարսից պաշտօնեաներից, Տալ-բատ անունով անգլիացի մի մայր, իր հայ-բնակիցներից մի քանիսի ընկերակցութեամբ, ձեռք բերեց պարսից Շահից (կամ աւելի լաւ է ասել նրա առաջին մինիստր Էմին-Սուլթանից) ծխախոտի մենապատկանութեան իրա-ւունքը, պարտաւորվելով պարսկական գանձարա-նին իւրաքանչիւր տարի 375,000 Փրանկ վճարել: Երևում է, որ ծխախոտի մենապատկանութեան ի-րաւունքը ձեռք բերելու համար անգլիացիները բա-ւական շատ են աշխատել, որովհետեւ պարսից կա-ռավարութիւնը նախկին փորձերից շատ լաւ գիտէր, որ պարսիկները առհասարակ սաստիկ թշնամա-բար են վերաբերվում դէպի անուղղակի հարկերը մինչև անգամ այն ժամանակ, երբ կառավարու-թիւնը իրան է վերապահում դրանց շահագործու-թիւնը:

Անգլիական ընկերութիւնը անմիջապէս սկսեց իր գործունէութիւնը: Նա ուղարկութիւն չը դարձնելով փողովդի խուլ կերպով արտադրա-վող տրտունջի վրա, շտապեց Եւրոպայից հրաւի-րել գործակաւորներ, բանուորներ ու ինժեներներ և մի քանի ընդարձակ պահեստներ կառուցեց ծխախոտ պահելու համար: Սկսեցին ծխախոտի ընկերութիւնը պէտք է սկսել իր գործունէու-թիւնը և ծխախոտ առնել պարսիկներին:

Սակայն, ընկերութեան գործունէութեան սկսվե-լու ժամանակամիջոցը մտնելու էր և փողովդի մէջ ևս յուզումներ աւելանում էր: Սովորական երկուք է Պարսկաստանում, որ այդպիսի դէպքերում առա-ջին դերը խաղում է մահմետական հոգևորակա-նութիւնը, ահա այդ ֆանատիկոս հոգևորականու-թիւնը սկսեց զրգռել ամբողջ և դրդել նրան բողբոջելու թէ խօսքով և թէ գործով: Մղկթների պատերի վրա յուզիչ հրաւերներ երևեցան: Բա-ղադրեցին և քարվանդարաններում խօսում էին միայն այդ առիթի մենապատկանութեան մասին: Ֆանատիկոս մոլլաները ամեն տեղ քարոզում էին, որ մենապատկանութիւնը հակառակ է Գու-րանի ոգուն: Շիրազի մուշտիկը ակնյայտի գոր-դում էր ժողովուրդը անգլիացիներին դէմ և քա-րոզում էր դիմադրել նրանց: Այդպէս անուանված մուհաբբի մամբը յուզումներն մէջ անցաւ: Անգլիական հիւպատոսարանի առջև ամբողջ ա-մեն օր անկարգութիւններ էր անում: Յուզումները այն աստիճանին հասաւ, որ անգլիական հիւպա-տոսը օգնութիւն խնդրեց Թէրանից: Շահի կա-ռավարութիւնը շտապեց զօրքեր հրաւիրել և խիստ միջոցներ ձեռք առնել թափրդում: Բայց Ֆանատիկոսութիւնը: Հակաանգլիական շարժման ղեկավարները զազանի փողով կազմեցին և վճռեցին սեպտեմբերի 3-ին արևմտահեղ ապստամբութիւն սկսել, որպէս զի կարողանան արգելել անգլիական ընկերութեանը սկսել իր գործունէութիւնը: Այդ վճիռը շուտով յայտնի եղաւ Թէրանում: Շահը բարեւը համարեց, յուզումները առաջն առնելու համար, իւրեւ անգլիական ընկերութիւնից մենա-պատկանութեան իրաւունքը, որով և զազարեցին խռովութիւնները:

Անգլիայում այդ անաջողութեան լուրը ծանր տպաւորութիւն գործեց: Անգլոյ մայրի և նրա ընկերների զորութիւնը բաւական ողբալի է, մա-նաւանդ որ սկզբնական աշխատանքների համար մեծ ծախսեր են արել:

ԴԱՏ ՖՐԱՆՍԻՍԻՍԻ ՍԻ ՔԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԵՐԻ

Հռոմում մեր ընկերակցներն յայտնի անա-խորժ ցոյցներն և տարածայնութիւններն վերջ գնելու համար, Փրանսիական արդարադատու-թեան մինիստր պ. Ֆալիէր, մի չըջաբերականով հրաւիրեց Փրանսիական եպիսկոպոսներին Ժա-մանկապարտական հրաւիրել ուստագնացու-թիւններին մասնակցելուց, որոնք առաջարկին անկարգութիւն և խախտութեան շուրջում: Եպիսկոպոսներից մի քանիսը շատ յանդուգն կեր-

պով բողբոջեցին մինիստրի այդ կարգադրութեան դէմ: Եպիսկոպոսներից մէկը, Էքսի (Aix) եպիս-կոպոսը, բողբոջեց մոռանալով՝ կօնկորդատի ո-րոշումները, որոնց հիման վրա կառավարութեա-նը իրաւունք է արվում պահանջել, որ եպիսկո-պոսները չը հեռանան իրանց թեմերից առանց նրա թոյլտուութեան, մինիստրին ուղարկած պա-տասխանի մէջ ուղղակի ասում է, որ ինքն դի-տաւորութիւնն չունի կատարել կառավարութեան պահանջները: Որովհետեւ կառավարութիւնը մի քանի օր չարունակ այդ խիստ պատասխանը ա-ռանց հետևանքների էր թողել, ուրիշ եպիսկո-պոսներ ևս գտնվեցան, որոնք Էքսի եպիսկոպոսի օրինակին հետեցին: Արդարադատութեան մի-նիստրը մտածեց, թէ եպիսկոպոսի այդ ապօրինի վարմունքը անպատիժ թողնելը կարող է առիթ տալ ձախակողմի արմատական հանրապետական-ներին՝ մեղադրել մինիստրութիւնը, որ նա կամե-նում է հանդիմանալ կղերականներին,—վճռեց բա-ւական խիստ միջոց գործ դնել, այն է դատի ենթարկել կառավարութեան պահանջներին չեն-թարկվող եպիսկոպոսներին:

Սակայն այդ բոլորը պատահեց մի շատ անյար-մար ժամանակ, այն է, երբ սկսել էր կաթոլիկ կուսակցութիւնը հաշտվել հանրապետական կա-ռավարութեան հետ և նրա կողմն անցնելու հա-կումներ ցոյց տալ: Կղերական կուսակցութեան նշանաւոր անդամներից մէկի, Բօնօմանի ջան-քերով, կազմակերպվեց «Ֆրանսիական Դաշնակ-ցութիւն» անունով կաթոլիկների մի ընկերու-թիւն, որի անդամները վճռեցին կատարելապէս հաշտվել ոչ միայն հանրապետութեան հետ, որ-պէս կառավարչական ձևի հետ, բայց և այժման հանրապետական մինիստրութեան հետ: Մի շատ հետաքրքիր յօդուածում, որ տպվեց «Nouvelle Revue» ամսագրի վերջին տետրակում, Բօնօման ուղղակի յայտնեց, որ ինքն և իր քաղաքական համակրաները կատարելապէս հաւատ են ընծա-յում այդ մինիստրութեանը և հանրապետութեան նախագահին, որը իր նորերս արտասանած ձա-ռերում հակում ցոյց տուեց վերաբերվել կաթո-լիկներին և նրանց հողերակաւորութեանը, որպէս մեր երկրի հաւասար իրաւունքներ ունեցող քա-ղաքացիներին, այն երկրի, որի պետական կազ-մակերպութիւնը հիմնված է խղճի և կարծիքների կատարեալ ազատութեան վրա: Պ. Բօնօման ա-սում էր, որ իր հիմնած դաշնակցութիւնը մինչև անգամ չէ պահանջում, որ անյապաղ վերադառնա-կաթոլիկ եկեղեցու դէմ հրատարակված օրէնքնե-րը, այլ պատրաստ է դո՛ս լինել, եթէ որ այդ օ-րէնքները մեղծօրին գործադրվեն ինկատի ունենա-լով այն հանդամանքը, որ այդ օրէնքները մասամբ հետանք էին կաթոլիկ հողերակաւորութեան դէպի հանրապետութիւնը բռնած թշնամական դիրքի: Ֆրանսիական կաթոլիկ հողերակաւորութեան նշա-նաւոր մասը, մի քանի եպիսկոպոսների հետ միասին, նկատելի կերպով հակվում էր դէպի Բօնօմանի գաղափարը, որը բարձրաձայն յայտա-րարում էր, թէ կաթոլիկները պարտաւոր են պաշտպանել կառավարութիւնը, ի թէ ցանկանում են, որ վերջինը բարեկամանայ նրանց հետ, կորց-նելով այդպիսով հանրապետական բանակի մի քանի կուսակիցներ: Հայտնիութիւնը արդէն կայա-ցած էր համարվում, որ արդարադատութեան մի-նիստրը անհրաժեշտ համարեց չըջաբերականով դի-մել եպիսկոպոսներին, որի դէմ բողբոջեցին մի քանի եպիսկոպոսները:

Ի նկատի ունենալով կաթոլիկ կուսակցութեան արմատաւորութիւնը՝ հաշտվել ներկայ հանրապետա-կան կառավարութեան հետ, արդարադատութեան մինիստրի արած անգործ քայլը կրկին նախկին յարաբերութիւնները կը հաստատի հանրապետա-կան կառավարութեան և կաթոլիկ կուսակցու-թեան մէջ, եթէ որ մինիստրը չը հրաժարվի իր մտադրութիւնից՝ դատի ենթարկել բողբոջող ե-պիսկոպոսներին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Միւսինց հեռագրում են, որ վիկտոր-էմմա-նուէլի մահվան տարեդարձի (յոնվարի 9-ին) ա-ռիթով լինելի ցոյցներ արգելված են:

Կ. Պոլսից հեռագրում են, որ եղիպտական հարցի վերաբերմամբ Բ. Գուռը մեծ եռանդով բանակցութիւններ է վարում Անգլիայի հետ: Անգլիական դեսպան Ուայտ այդ հարցի վերա-բերմամբ երկ երկարատեւ խոսակցութիւն ունէր մեծ վիզերի հետ:

Իերլինից հաւաստի աղբիւրներից հաղոր-դում են, որ ըումինական թաղաւորի Պոստգամ գնալը մասնաւոր բնաւորութիւն ունի և որ նրա հետ ոչ մի մինիստր չը կայ:

Սօֆիայից Բէլգրադում ստացված տեղեկու-թիւններին համեմատ, պրինց Ֆէրդինանդ, զգուհ-ով Բոլզարիայի անհաստատ զորութիւնից, վրճ-ուեց ուղարկել նոյնմեքին յատուկ լիաօրէնք վրէժնա, Լօնդոն, Բերլին և Հռոմ, ինչպէս ինքն ալ պետութիւնների կառավարութիւններից՝ ճանաչել Բոլզարիայում այժմ գոյութիւն ունեցող կարգե-լը:

Չերնօգորիական կառավարչական լրագրը ուրախութիւն է յայտնում, որ Սկուտարիի գննե-րալ-հասնադապետ է նշանակվել Աբդուլ-Քէրիմ-փաշան: Դրանով կատարվեց չերնօգորիական կա-ռավարութեան ցանկութիւնը, որը վաղուց ար-դէն պահանջում էր պաշտօնանկ անել նախկին նահանգապետին: Մեծ վիզերի այդ կարգադրու-թեամբ առաջին քայլն է անվում Ալբանիայում կարգ հաստատելու համար: Աբդուլ-Քէրիմ-փա-շան եռանդով զինուորի և փորձված պետական մարդու համբաւ ունի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԴ, 21 հոկտեմբերի: Մեծ իշխանուհի Մարիա Պաւլովնային շնորհված է Մարիամնան չքա-նշան 15 տարւոյ անեղծ ծառայութեան համար Կայսրուհի Մարիայի վարչութեան մէջ: Յայտա-րարված է, որ բերքի ձեռք բողբոջողներու օրէնք-ները երկաթուղիները ձրի պէտք է տեղափոխեն, երբ նահանգական և չըջանային վարչութիւններից վկայականներ կը ներկայացնեն: «Нов. Вр.» լրա-գիրը լսել է, որ սովետանշ տեղերի համար բացի զանձարանից արված 32 միլիոն ռուբլուց, նոյն նպատակով կրկին 32 միլիոն ռուբլ է արված: «Впрж. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ երկա-թուղիների ներկայացուցիչների համագումար ժո-ղովը քննում է երկաթուղային տարիքները հա-ւասարեցնելու հարցը: լրագիրը ենթադրում է, որ ընդհանուր տարիքի մասին շուտով կիրա-րործվի:

ՎԼԱԴԻՎՈՍՏՈՎ, 21 հոկտեմբերի: Երեկ Ամու-րեան ղեկավարական դատարանում քննվեց տա-ծանակի աշխատանքներին զատապարտված փա-խստական Դորոգովսկիի, Օրլովսկիի և Գուշկովի ձեռքով սպանված Փրանսիական նաւատորմի օ-ֆիցեր Բուսէլի գործը: Դատարանը երեքին ևս կախաղանի դատապարտեց:

ՕԲԵՐԼ, 21 հոկտեմբերի: Օկա այսօր սառեց: ԲԻԲԵՆՍԿ, 21 հոկտեմբերի: Նաւագնացութիւնը փակվեց:

ԿՈՍՏՈՒՄՈՎ, 21 հոկտեմբերի: Վճիռ գետը սա-ռեց:

ԲՐԵՍԼ, 21 հոկտեմբերի: Ռուսաց նաւերի հրա-մանատարները երեկ նախաձեռնեցին «Surcouf» զրահակիր նաւի վրա: Երեկոյան պուռն արվեց մօտը լիպայիտի կողմից 1000 հոգի ուսու-ն ֆրանսիացի ուսուցիչ-օֆիցերների համար: Հան-դիսաւոր ներկայացմանը օթեկաններում նստած ուսու օֆիցերները օւղիանների առարկայ դար-ձան:

ՄԱԴԻԻ, 21 հոկտեմբերի: Թագուհի-իննամա-կաւուհին ստորագրեց Մեծ իշխան Վադիմի Ալեք-սանդրովիչին «Ոսկէ Գեղ» շքանշանը՝ շնորհելու հրամանագիրը:

ԴԱՆՅԻ, 21 հոկտեմբերի: «Поларная Звѣз-да» նաւը ռուսաց Կայսերական լուսանկրով և զանիական թագաւորական զոյգով եկաւ այստեղ այսօր, առաւօտեան 9 ժամին: Հանապարհօրդնե-րին դիմաւորեցին ռուսական զինուոր կոմս Շու-վալով, մի քանի հիւպատոսներ և տեղական բարձր իշխանութիւնները:

ՊԱՐԻՉ, 21 հոկտեմբերի: Այսօր Ֆալիէր պատ-գամաւորների փողովին առաջարկեց մի օրինա-գիծ՝ անառակութիւնը ջնջելու վերաբերմամբ:

ԲՐԵՍԼ, 21 հոկտեմբերի: Հիւսիսային նաւա-տորմը ծովը մտաւ Ռուսական և ֆրանսիական նաւերը փոխադարձաբար ողջունեցին միմեանց:

ՊԵՏԵՐՈՒԴ, 22 հոկտեմբերի: Թագաւոր կայ-սրը և Թագուհի Կայսրուհին Օգոստոսիաւ Երե-ւանիւրով Դանիայի թագաւորը և թագուհին, Ուէլսի իշխանուհին իր երկու աղջկաներով, շա-բաթ, այս հոկտեմբերի 19-ին, երեկոյան 7 ժա-



